ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի, 2020 թվականի N 12-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձաողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2020 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ հայտարարելու և մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին հարցը:

    2. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2020 թվականի հունիսի 30-ի № 21-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

    3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-աշխատակազմի ղեկավար Նազելի Նիկողոսյանի և գործադիր տնօրենի տեղակալ–ֆինանսական տնօրեն Արարատ Հակոբյանի նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու մասին հարցը:

4. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 62-Լորոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:
5. Հանրային հեռուստըառադիոընկերության խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N61-Լ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

4 սեպտեմբերի, 2020 թվական

ք. Երևան